



## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի  
զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի

### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի (այսուհետ՝ Մարզպետարան) աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) զարգացման ծրագրերի և վերլուծության բաժինը (այսուհետ՝ Բաժին աշխատակազմի) կառուցվածքային ստորաբաժանում է:
2. Բաժինն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, քաղաքացիական ծառայության մասին օրենսդրությամբ, «Պետական կառավարչական հիմնարկների մասին», «Բյուջետային համակարգի մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Քաղաքացիների առաջադիւթյունները, դիմումները և բողոքները քննարկելու կարգի մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով և կարգադրություններով, Հայաստանի Հանրապետության կառավարության և վարչապետի որոշումներով, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի (այսուհետ՝ Մարզպետ) որոշումներով և կարգադրություններով, Աշխատակազմի ղեկավարի հրամաններով, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև Բաժնի լիազորությունների հետ կապված այլ հրավական ակտերով:
3. Բաժինը կազմավորում, վերակազմակերպում և նրա գործունեությունը դադարեցնում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
4. Բաժնի կանոնադրությունը հաստատում (փոփոխում) է Մարզպետը:

### II. ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Բաժինն իր լիազորությունների շրջանակներում՝
  - 1) ապահովում է ՀՀ Գեղարքունիքի մարզի (այսուհետ՝ Մարզի) սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակման, կազմման և հաստատման աշխատանքների համակարգումը:
  - 2) ապահովում է Մարզի զարգացման ծրագրերի ներդաշնակեցումը Հայաստանի Հանրապետության կառավարության երկարաժամկետ և միջնաժամկետ ռազմավարական ծրագրերին՝ հաշվի առնելով Մարզի սոցիալ-տնտեսական վիճակի առանձնահատկությունները:
  - 3) ապահովում է մարզային զարգացման ծրագրի ինստիտուցիոնալ կառույցների (մարզային հանձնաժողով, ոլորտային աշխատանքային

- խմբեր, մոնիտորինգի և գնահատման խումբ, մարզպետարանի ռեսուրս կենտրոն) համակարգված աշխատանքը.
- 4) ապահովում է մարզային զարգացման ծրագրերի մշակման մասնակցային գործընթացը, հրապարակայնությունը և գերակայությունների սահմանման թափանցիկությունը.
  - 5) ապահովում է Մարզպետի և Աշխատակազմի ղեկավարի մոտ զարգացման ծրագրերի վերաբերյալ անցկացվող խորհրդակցությունների և հանդիպումների կազմակերպման աշխատանքները, ինչպես նաև դրանց ընթացքում տրված հանձնարարականների կատարումը.
  - 6) ապահովում է համագործակցությունը մարզային նշանակության նպատակային ծրագրեր իրականացնող պետական, միջազգային և այլ դոնոր կազմակերպությունների ու ծրագրերի հետ.
  - 7) իրականացնում է զարգացման ծրագրերի նախագծման և իրականացման գործընթացը.
  - 8) ապահովում է Սպրզի, Մարզի համայնքների և այլ երկրների համապատասխան տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության աշխատանքների կազմակերպումը.
  - 9) ապահովում է զարգացման ծրագրերի իրականացման մոնիտորինգի և գնահատման աշխատանքների ամփոփ հաշվետվությունների կազմումը.
  - 10) յուրաքանչյուր տարվա համար ամփոփում է նախորդ տարվա ծրագրերի կատարողականի վերլուծությունը և կառուցվածքային ստորաբաժանումների հետ համատեղ Աշխատակազմի ղեկավարի միջոցով Մարզպետի հաստատմանն է ներկայացնում զարգացման տարեկան ծրագիրը՝ ըստ ոլորտների.
  - 11) իրականացնում է ծրագրային քաղաքականության վերլուծություն, ցուցանիշների և թիրախների վերհանում և ազդեցությունների գնահատում.
  - 12) ապահովում է Մարզի սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ անհրաժեշտ վերլուծական տեղեկատվության տրամադրումը Մարզպետին.
  - 13) ապահովում է մասնավոր հատվածի, փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանն ուղղված համագործակցության կազմակերպումը, կատարում իրավիճակի ուսումնասիրություններ և վերլուծություն, ներկայացնում առաջարկություններ կամ ծրագրեր.
  - 14) իրականացնում է աշխատանքներ մարզի տարածքում առևտրի, հանրային սննդի սպասարկման բնագավառում ոլորտի տնտեսավարող սուբյեկտների գործունեության ընդլայնման արդյունավետության ապահովման ուղղությամբ:
  - 15) ապահովում է մասնավոր հատվածի և արդյունաբերության, սոցիալական (կրթություն, առողջապահություն, մշակույթ, սպորտ և սոցիալական պաշտպանություն), գյուղատնտեսության, բնապահպանության, քաղաքաշինության, մարզային ենթակառուցվածքների (ճանապարհներ, ջրային տնտեսություն, գազամատակարարում և այլն) ոլորտների զարգացման միտումների ու գերակայությունների բացահայտումը, այդ ոլորտների զարգացմանն ուղղված ծրագրերի մշակման համակարգումը և նպաստում դրանց իրականացմանը.
  - 16) համակարգում է գոթաշրջության զարգացմանն ուղղված ծրագրերի մշակման աշխատանքները մարզում և նպաստում դրանց իրականացմանը.
  - 17) մեթոդական աջակցություն է ցուցաբերվում Մարզի համայնքների քառամյա զարգացման ծրագրերի կազմման աշխատանքներում, ծրագրերից վեր է

- հանում համայնքների հիմնախնդիրները, ապահովում դրանց իրականացումը և յուխաքանչյուր տարվա համար ամփոփում և վերլուծում է նախորդ տարվա ծրագրերի կատարողականը.
- 18) կազմում և վարում է Մարզի համայնքների քառամյա զարգացման ծրագրերի էլեկտրոնային գրադարանը.
- 19) ապահովում է ոլորտին վերաբերող տեղեկատվական հոսքերի կառավարումը՝ համայնքներից, հասարակական և մասնագիտական կառույցներից ստանում է անհրաժեշտ տեղեկատվություն նրանց կողմից իրականացվող ծրագրերի մասին՝ մարզային զարգացման տեղեկատվական բազան համալրված վարելու, ինչպես նաև զարգացման ծրագրի իրականացման մասին Մարզպետի տարեկան հաշվետվությունը նախապատրաստելու և ներկայացնելու համար:
- 20) համակարգում է ինֆորմացիոն տեղեկատվական նոր համակարգերի մշակումը և ապահովում դրանց ներդրումը Աշխատակազմում.
- 21) համակարգում, աջակցում է մարզի սոցիալական աջակցության պետական ծրագրերին, ծառայություններ տրամդրող կազմակերպություններին սոցիալական ծրագրեր իրականացնելիս.

### III. ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ՂԵԿՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՅԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

6. Բաժինն իր գործունեությունն իրականացնում է Մարզպետարանի հաստիքացուցակով նախատեսված կազմով:
7. Բաժնի կառավարումն իրականացնում է Մարզպետը:
8. Բաժնի գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է Աշխատակազմի ղեկավարը:
9. Բաժնի ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է Բաժնի վարիչը:
10. Բաժնի վարիչի և աշխատողների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների քարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների, քաղաքացիական ծառայության դասային աստիճանի հետ կապված դրույթները սահմանվում է նրանց կողմից զբաղեցվող քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով:

-----